**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը**՝ Ավագ Ավանեսյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**՝ Ֆինանսների նախարարի տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Ալմաթի (Ղաղախստանի Հանրապետություն) 2023 թվականի մայիսի 15-ից մինչև մայիսի 17-ը:

**4. Հրավիրող կողմը**՝ Եվրասիական զարգացման բանկ

**5. Գործուղման նպատակը**՝

Մասնակցություն Եվրասիական զարգացման բանկի կողմից կազմակերպվող Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի զարգացումը ֆինանսավորող հաստատությունների ասոցիացիայի (ADFIAP) (այսուհետ՝ Ասոցիացիա) 46-րդ ամենամյա հանդիպմանը:

**6. Քննարկված թեմաները**՝

1) Ներդրումները որպես Ասիայում կայուն աճի շարժիչ ուժ. զարգացման ինստիտուտների դերը և առաջնահերթությունները,
2) Թվային ենթակառուցվածքներ,
3) Ֆինանսական ենթակառուցվածքներ,
4) Ջրամատակարարում, Էներգետիկա և կոմունալ ենթակառուցվածքներ,
5) Ղազախստանի և Կենտրոնական Ասիայի ներդրումային գրավչությունը,
6) «Կանաչ օրակարգ» զեկույց:

**7. Հանդիպումները, ելույթները՝**

Առանձին ելույթներ նախատեսված չէին: Կայացել են առանձին հանդիպում-քննարկումներ Եվրասիական զարգացման բանկի գործընկերների հետ:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Մի շարք դրամաշնորհային և ներդրումային նախագծերի կյանքի կոչման նպատակով պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում իրականացնել առցանց քննարկում:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Շփումները նշված զարգացման ինստիտուտի համապատասխան շրջանակների հետ օրակարգ է բերել ԵԶԲ տնտեսական աջակցության հիմնադրամի միջոցներից ՀՀ ՖՆ

գանձապետական համակարգի կատարելագործման նպատակով դրամաշնորհի տրամադրման հնարավորության նախատեսման հարցը, որը սահմանված քննարկումների արդյունքում կդիտարկվի և կիստակեցվի ֆինանսների նախարարության կողմից:

**Գործուղվող՝**

Ֆինանսների նախարարի տեղակալ
Ավագ Ավանեսյան

Recoverable Signature

X 

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

**22.05.2023թ.**